

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՎԱՆՔԱՊԱՏԱԿԱՆ ՄԱՐՅԱՅ ԿԱՆՈՒՄԵՐԻ

Թեանց, որպէս զի այդ ցանկին հետևողութեամբ կատարեն առաջնորդական ընտրութիւնը. Այս ցանկը պիտի պատրաստուի Խառն ժողովոյ կողմէ և երեք ամիսն անգամ մը պիտի սրբազրուի: Խառն ժողովոյ այս որոշումով: վերջնապէս թողուեցաւ քառանկերուն եռանուն ցանկ զրկելու գրութիւնը: Յայտնի է թէ այս ցանկ պարտաւորիչ չէր գաւառներուն համար, որք միշտ տեղեկութիւն կ'ենդրէին որիչ յարմար ընտրելիներու վերայ: Պատրիարքարանը մէկ յարմար անունի քով երկու նուազ յարմար անուն դնելով, եռանուն ցանկին շնորհիւ իր ուղան ընտրել կուտար համակերպող Ա. Իճակնե-րուն: Բայց վերջերս մանաւանդ Եղմիր և Տրապիզոն գիտողութիւն ըրին այս գրութեան դէմ: Այսուհետև, Պատրիարքարանը, իւրաքանչիւր առաջնորդական ընտրութեան առթիւ, պիտի զրկէ ընտրելի եկեղեցականներուն ամբողջ ցուցակը, որք երբ ընտրուին: Անորոնն ո՛ր և է դժուարութիւն չծագի անոնց վաւերացման համար:

— Բէմախի Ա. Իճակնե հոգևութիւնն յանձնուեցաւ Երզնկայի Առաջնորդարանին:

— Սամսոնի Գաւառական ընդհանուր ժողովն առաջնորդական ընտրութիւն կատարած և տեղեկագիրը զրկած էր, որմէ կերեւէր թէ Տ. Վահրամ եպ. Առաջնորդ ընտրուած է նոյն վիճակին: Ժողովն ընտրութեան օրինաւորութիւնն ստուգելով հաստատեց զայն և միանգամայն Վահրամ Սրբաւանին կամքին թողուց յանձնառութիւնն այդ պաշտօնին: Վահրամ Սրբաւան շնորհակալութիւն յայտնելով թէ Աղջ. Վարչութեան և թէ Սամսոնի վիճակայիններուն իրեն նկատմամբ ցոյց տըրուած համակրանքին համար, աւելցուց միանգամայն թէ իր ներկայ պաշտօնը չի ներքեր իրեն ուրիշ մը ստանձնել: Ժողովն որոշեց որ առաջին ընտրութիւնը գրով հաղորդուի ն. Կերպաստուութեան և պատասխանն ընդունուի:

— Խառն ժողովոյ մէջ երբ կարգացուիւր է Մանկունի Սրբազանի ճանիկի առաջնորդ ընտրուած ըլլալու տեղեկագիրը: Բազար. Ժողովոյ դերատեսնապէս Ստեփան փաշա և ներկայ անգամները կարծիք յայտնեց են թէ Տ. Վահրամ Սրբազան պէտք չէ երթայ Սամսոն, ըստ որում կեղբոնին մէջ իր ունեցած պաշտօնն աւելի կարևոր և անհրաժեշտ դարձուցած է անոր ներկայութիւնն ի Պոլիս: Կրօնական ժողովոյ ատենապետ Տ. Գրիգորիս Սրբազան ևս նոյն կարծիքն յայտնած է:

— Սոյց Կաթող Տեղապահ Տ. Կրակոս եպիսկոպոս արեղայ ձեռնադրեր է Պ. Միքայէլ Աջապահանը անուանելով Տ. Միքայէլ արեղայ:

— Վենետիկ միաբնութիւնն երրորդ անգամ ըլլալով 1,000 ֆր. զրկած է Պատրիարքարան: Իր հրատարակութեան հասոյթէն:

1895 թ. սեպտեմբերի 18-ին համուձայն ս. Սինոդի հրամանին (թիւ 1170) մենք, Կեղամ վարդապետ Բարաշանեանց և Մեսրոպ վարդապետ Տէր Մովսէսեան, դնացինք Մարցայ կալուածքի հետ ժամօթանալու, ուսումնասիրելու նրա դիրքը, սահմանները, եկամուտի չափը և ապագայում վանքի համար սպասելիք օգուտները: Կատարելով մեր ստանձնած գործը, ժամանակին Սինոդին ներկայացրինք մի տեղեկագիր, որը թեթեւ փոփոխութիւններով յանձնում ենք տպագրութեան: Կալուածքում մնացինք հինգ օր. ձիով և ոտքով պտտեցինք սահմանները, մանրամասն և կարելի եղածին չափ ծիշտ տեղեկութիւններ հաւաքեցինք նորա պատմութեան և այն վէճի մասին, որ եօթանասնական թուականներից ի վեր վարում է վանքի դէմ արքունի դանձարանը, որի ներկայացուցիչները ամենայն տիպիութեամբ այսբան երկար տարիների ընթացքում ամենայն ճիգ թափել են ապացուցանելու, որ այդ կալուածքի միայն ամենաչնչին մասն է վանքի սեպհականութիւն կազմում, չնայած մեր ունեցած հաստատուն փաստերի և չլրջակայ գիւղերի ընակչաց անկողմնապահ ցուցմանց: Տեղեկութիւններ ժողովելիս օգտուել ենք կալուածքի ույն ժամանակի կառավարիչ պ. Տիգրան Տէր Գաթեանի ցուցմունքներից և նորա մօտ եզոզ դատաստանական գործերի պատճէններից:

ՄԱՐՅ ԿԱՆՈՒՄԵՐԻ

Անցեալ դարու վերջերը Դարարաղի կողմերը սաստիկ սով է ընկնում, ընակչաներից շատերը ցրվում են դանազան կողմեր, մի մասն էլ դալիս մշտական ընակչութիւն է հաստատում: Լօռուայ ամայի գիւղերում, ուր օգը, ջուրը, լեռնոտ և անասու այլն տեսքը միանգամայն համապատաս-

խանութ էր իրենց բնիկ հայրենի երկրին: Գողթականներն հետ էր Սիմէօն եպիսկոպոս Աղուանեանը: Սա միաբանութիւն է հաստատում Օձունի (Ուղունդար) վանքում՝ Յնան (Ռանկու գիւղում: նորոգելով 735 թուին կառուցած վանքը և միաբանութեան ապահովութեան համար իւր սեպհական միջոցներով, կամ ուրիշների ձեռնառութեամբ, ձեռք է բերում վեց կոոր ընտիր կալուածք Բորչալուկ գաւառում և Օձուն գիւղից հինգ ժամ հեռու գանուոյ ընդարձակ Մարցոյ կալուածքը: Մարցի կալուածաթուղթը գրած է վրացերէն լեզուով, կազմած 1799 թ.: Այդ թղթից երևում է, որ յիշեալ թուին Սիմէօն եպիսկոպոսը 150 ուրբիով գնել է Բաշէուկ—Մելիքով ազնուականների հայրական Մարց կալուածքի 5/4 մասը՝ հետեւեալ սահմաններով Մարցախոր, Քացանախոր, Ղազախու մերի (անտառ) և Քուրիկի կամ Քուրաինի հող: Սիմէօն եպիսկոպոսի մահուանից յետոյ, որի շիրիմը մինչև այժմ էլ ցոյց են տալիս Օձունի վանքի հիւսիսային պատի մօտ, վանահայր է կարգուում նրա ձեռնասուն Օհան վարդապետը: Միաբանութիւնը կարծառե ծաղկելուց յետոյ, կորցնում է իւր նշանակութիւնը: Բորչալուի ընտիր հողերը մասնաւոր անձանց սեպհականութիւն են դառնում, մնում է միայն Մարցը, որի կալուածաթուղթը 1824 թ. ներկայացնում են Կովկասեան Ռուսաց կառավարութեանը ի հաստատութիւն:

Կալուածքը սկզբներում կառավարում էին Թիֆլիզի թեմի առաջնորդներից կարգուած գործակալ քահանաները, 1850—1885 թիւը կապալառուներ, 1885 մինչև 1898 թիւը Թիֆլիզի Կոնսիստորիայից նշանակուած յատուկ կառավարիչ: Իսկ այժմ կառավարիչներ նշանակուած է ս. Էջմիածնի Սինօղը: Սկիզբները ստացուած եկամուտը անում էր Թիֆլիզի Հոգևոր Կառավարութիւնը. ներսէս կաթուղիկոսը իւր առաջնորդութեան օրով այդ արգիւնքը յատկացնում է Հաղբատի վանքում ապրող եփրեմ կաթուղիկոսին, իսկ յիսուական թուից սկսած, կրկին ներսէս կաթուղիկոսի կարգադրութեամբ, կալուածքը անցած է ս. Էջ-

միածնի ձեռքը, թէև դարձեալ Թիֆլիզի Կոնսիստորիան է շարունակում կառավարել իրրև անմիջական մօտ գանուոյ իշխանութիւն:

Կալուածքը գանուում է Թիֆլիզի նահանգի, Բորչալուի գաւառի, Լօռուայ պրիտուութեան մէջ, և անմիջապէս ենթարկուած է մօտ մի ժամ հեռու Դսեղ գիւղի տանուաէրութեան: Ընկած է երեք նահանգների՝ Թիֆլիզի, Գանձակի և Երևանի միացման տեղում: մի հանգամանք, որ շատ է փաստել մեզ, պատճառ լինելով վէճի ձգձը գուելուն: Որովհետև կալուածքի մի սահմանը՝ Գանձակ նահանգի Ղազախի գաւառն է յիշած, ուստի դանձարանի ներկայացուցիչ հաւատարմատարները երեք անգամ քննութեան են ենթարկել հարեան գիւղացիների ներկայացուցիչներին, աշխատելով ցոյց տալ, որ Ղազախի սահմանը ուղիղ կալուածքի միջովն է անցնում: Ըայց երեք անգամն էլ անպիտղ է անցել նրանց փորձը: Ենթահիւ կալուածքի հիանալի դիրքին, նրա աննման, ապագայում մեծ օգուտ խոստացող անտառներին, յիշած վէճը, որ սկսուել է եօթանասնական թուերին, վերջացումիայն 1898 թուին, երբ արդէն կալուածքի մի մասը տանուլ է տրուել: Ամբողջի տարածութիւնը ուղղազիծ հարթութեամբ, չհաշուած ձորերի զառիվայրերը՝ հաւասար է 21000 դեսիատինի, որից 7000 դեսիատինը մասամբ օկրուժնոյ սուղի, մասամբ պալտտի վճուով անցել է դանձարանին. մնացած 14000 դես. մասին բոլորը հասաւ մինչև Կայսերական սենատ. Ըայց քանի որ վանքը հաստատուն և անհրքելի հիմունքներ ունէր թէ ըաղմաթիւ թղթերով և թէ հարեան, երեք անգամ՝ հարցուփորձի ենթարկած գիւղացիների ցուցմունքներով, ուստի Կառավարչական սենատը վերջնականապէս հաստատեց պալտտի յօդուտ վանքի կայացրած վճիռը:

Կալուածքը առաջ զլիսաւոր սայլի և կառքի ճանապարհներից հեռու էր, մօտաւոր կենդրոններն էին՝ հարաւից Դիլիջանը 6 ժամ հեռի, լեռներով, ձիով և տեղ տեղ ստով հասանելի, արեւմտքից Փամբակի

Ղարաքիլիսան Տ ժամ հետի՝ ձիով և սայլով հասանելի. նոյն հեռաւորութիւնն անի նաև արևելահիւսիսում Զարալ—Օղլին, Լօսուայ գլխաւոր կենդրոնը: Այժմ երկաթուղին Փամբակայ ջրի և Զորագետի եղերքով արագութեամբ կտրում անցնում է մինչև մի ժամ հետի Դսեղ գիւղի ստորոտը: Մի համագամանք, որ զօրեղ կերպով պէտք է որ նպաստի կարուածքի եկամտի բարձրանալուն, որովհետև գիւրացել է նրա գլխաւոր ունեցածի՝ անտառի արտահանութիւնը:

ԿԱՆՈՒՆԻՅԵՐԻ ՍԵՂՄԱՆՆԵՐԸ, ԴԻՐՔԸ:

Ներկայ սահմաններն են՝ արևմտքից Թացանաջուր կամ Դժարաձոր վտակը մինչև մեծ Բարաջանագետի, իսկապէս վտակի խառնուելու տեղը: Արևմտահարաւից մեծ Բարաջանագետը (այս լեռնային գետակը ամենանուսազ ժամանակը պարունակում է 5—6 ջրաղացի ջուր), որ խառնուում է Դեպեռայի հետ և տարածուում մինչև Իգատակ կայր. այդտեղից սահմանը օւղիղ գծով բարձրանում է մինչև Մարցախորի գլուխը՝ Կուլէթ կոչուած: Մի եռանկիւնի կտոր վէճի ժամանակ տանու է տրուած պետական գանձարանին: Կուլէթից սահմանը շարունակուում է լեռնագագաթներով, Դսեղ արբունական գիւղի սահմանին կաշելով, մինչև Նաղարդաղ: Արևելահիւսիսից՝ Նաղարդաղից, իջնում է Էլեօղի կոչուած ճանապարհով մինչև Աթանսուի խառնարանը մեծ Բարաջան գետի հետ, ուր երկրորդ եռանկիւնին է կտրուած յօգուտ գանձարանին: Հիւսիսային սահմանն է Աթանսուի ակը՝ Խանրուլախ կոչուած. ապա Ալաւափոս, Ղաշիդատուկ և Զաթինդաղ կամ Դժարաձոր լեռնագագաթները:

Սահմանները արդէն պարզ ցոյց են տալիս կարուածքի մակերևոյթի կազմութիւնը, որը բազմաթիւ ձորերով, ձորավըտակներով մաս մաս բաժանուած մի լեռնոտ բարձրաւանդակ է, որի սահմանները մի փոքր լեռնաշղթայի բլրակներ են կազմում: Իսկ կենդրոնով արագութեամբ հոսում է մեծ Բարաջան կոչուած լեռնավտակը, որ ակ

ու ձախ կողմերից բաւական թուով փոքրիկ ճիւղեր է ընդունում: Բլուրները մերկ են, ամառը ծածկուում են բարձր խոտով, մեծամեծ հօտերի առատ սնունդ մատակարարելով. իսկ ձորերի փեշերը ծածկուած են խիտ, հաստարուն և բարձրադուխ կաղնիներով, չամիւներով, աճարիներով, կամ բարմատեակ թփերով: Օդը, ինչպէս պատմում են, և նոյն իսկ անտառային բնաւորութիւնը մակարեերէ է տալիս՝ թէ ամառը և թէ ձմեռը մեղմ է, ծայրահեղ ցուրտ և տաք եղանակ չուի, ջրերը առատ և առողջարար, հողը բաւական պտղաբեր: Ամբողջ շրջապարում գոյած է Մարցայ հացը: Անասնապահութեան, մեղուաբծութեան համար աւելի յարմար տեղ ցանկալ չէ կարելի: Թէև խոզող չի հասնում, բայց առատութեամբ կտացուին պարտիզպանութեան թէ բոյսեր և թէ պտուղներ:

Մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում կարուածքը նաև հնագիտական—պատմական տեսակէտից: Այդ համեմատարար փոքր տարածութեան վերայ հաշուում են ոչ պակաս քան 33 աւերակ գիւղատեղեր: Ընտիր խաչքար գերեզմաններով, կանգուն կամ աւերակ մատուռներով: Դարա Բագրատունեաց իշխանութեան ծաղիկալ ժամանակի յիշատակարաններն են, որոնց մի քանիսի արձանագրութիւնները ժողովել է Մարգիս Եպիսկոպոս Զալալեանը իւր «ձանապարհորդութիւն ի մեծն Հայաստան» գրքում (էջ 107): Այդ գիւղերի վերայ իշխում էր Դսեղ գիւղում նստող Մամիկոնեան ցեղից Մարձպան—սահմանակալ իշխանը, որ մնացել են այդ մեծանուն ցեղի վերջին շառաւիղի՝ Գրիգոր Մարձպանի և նրա քոյր Խորիչանի, հոյակապ շիրիմները և բարձրաքաշ ս. Գրիգորի հրաշակերտ վանքի փառահեղ աւերակները: Թաթարաց արշաւանքը ամբողջ Հայաստանի նման այդ կողմերէլ ամայացրեց, և բնակիչներից զրկուած գաշտերը սկսեցին ծածկուել անտառներով: Հաւանական է, որ երբ Սիմէօն Եպիսկոպոսը գնեց կարուածքը՝ միանդամայն տնայի էր, որովհետև այնտեղ եղած հինգ գիւղերից ամենահինը՝ Մարց, բնակատեղի

է դարձել Ղարաբաղից եկած դաղթականներին համար միայն դարուս սկզբներում: Իսկ միւս շորս զիւղերի բնակիչները ամենամտր ժամանակներս են հարեան այլ և այլ տեղերից այդանց վերաբնակուել, Թիֆլիզի Հոյկոսր Կառավարութեան թոյլտուութեամբ: Այս նոր եկեօրները երկար ժամանակ անթնայ կերպով կտտրել են անտառի ծառերը՝ մասամբ վարեւահոյ բաց անելու, մասամբ կենդանիներին կերակրելու համար: Տեղացիների պատմելով սովորութիւն չէ եղել ձմեռուայ համար խոտ ամբարել, այլ ձիւնը ընկնելուն պէս խրաբանչիւր գիւղացի կացիներ ունն առած հարիւրամեայ ծառեր զլորում և նրանով կերակրում էր անտառներին: Սոսկալի սպաւորութիւն են թողնում այցելուի վերայ հարիւրաւոր և հարարաւոր ծառերի վիթխարի բուները գետնի վերայ վառած, որոնք մնում են իբրև անպէտք մարմին և փթում են. բարեբաղգարար այժմ սակաւ առ սակաւ վերջ է դրուել այդ բարբարոս սովորութեանը:

Գ Ի Ի Ղ, Ե Բ.

Կալուածքում կան հինգ գիւղ. դրանցից մէկը անդառնալի կերպով վճռուել է յօդուս գանձարանի, մնում է 4 գիւղ: 1) Մարց, 1895 թուին ունէր 38 պաշտօնական և 60 իսկական կամ մասալ ուտող ծուխ. ժողովուրդը 1800 թուից յետոյ Ղարաբաղից դաղթած գիւղացիներ են, անտառների և լեռների մէջ առանձնացած բնակուելով, պահպանել են համեմատաբար անփոփոխ իրենց մայրենի բարբառը, ուստի հարեան գիւղացիների համար դժուար հասկանալի են խօսում. սորա ազբառ են և անկիրթ: Սա միակ գիւղն է որ շարունակում էր ծառայել վանքին, վճարելով տասանորդական և այլ կալուածատիրական հարկեր: 2) Լօրուտ, ունէր 42 պաշտօնական և 55 իսկական ծուխ. բնակիչները դաղթել են Թիֆլիզի Հայոց Հոգեւոր վարչութեան թոյլտուութեամբ Ղազախի Ղարաչոյ գիւղից 1860 թ. սկիզբները բարեխղճութեամբ կատարում էին իրենց պարտքը, մեր կապալառուներին վճարելով հասանելի

տուրքերը, բայց երբ եօթանասնական թուին կալուածքը գանձարանի ներկայացուցիչների կողմից վէճի տակ դրուեց, չարամիտ անձանց թեւադրութեամբ գողարեցին երկու կողմին ևս տուրք տրուց և վանքի կապալառուին ստիպեցին դուրս գալ գիւղից: Ունեն մի քահանայ, որ այդ խառնակութեան մէջ ամենավատ գեր է կատարելու են իրենց ձեռքի տակ ամենաբնտիր վարելահոգեր և բաւական բարեկեցիկ են: Սորա կարողացել են իրենց քաջութեամբ սահման դնել Ղազախի թուրքերի աւարառութիւններին և սպանութիւններին: 3) Շամուտ, ունէր 20 ծուխ. գեռ պաշտօնական ցուցակագրութեան չեն ենթարկուած, հիմնուել է 1870 թ.: Այդ ժամանակ նրանք ճանաչուած էին իբրև արքունական գիւղացիներ վանքապատկան հողի վերայ ապրող. երբ սկսուեց կալուածական վէճը՝ արքունի անտառապահները գիւղի հողերը կապալով տալիս էին Ղազախի թուրքերին, որոնք իրենց գողութիւններով և մարդասպանութիւններով պատճառ եղան, որ գիւղի բնակիչները շուտով ցրուեցին: 4) Աթան, ունէր 18 ծուխ. նորա վերաբնակուել են Հազրատից և Շիրակի դաւառից, վանքի թոյլտուութեամբ. բայց սրանք էլ վերջերը, օրինակ առնելով միւս գիւղացիներին՝ ըմբոստացել էին և 1880 թ. սկսած այլ ևս ոչինչ չէին վճարում: 5) Ահնիզօր, ունէր 12 ծուխ, պալատի վճռով այդ գիւղը անցել է արքունի գանձարանին:

Հին աւերակ գիւղերը ծառայում են մասամբ այս յիշած գիւղերի համար կամ իբրև ձմեռուայ գոմատեղեր, կամ ամառանոցներ: Այդ աւերակներից Մարցի գիւղացիների ձեռքն են Խոջիկ, Իքատակ, Խաչի կամ ճղնաւորի թալայ, Քուրգուկ, Ղազախաձօր, Արփաթալայ, Չաթինգաղի բողաղ: Լօրուտի ձեռքն են՝ Քուրաթիկ, Սոթ, Փրիտակ: Աթանի ձեռքն են՝ Քիլիսալու, Փրփրաչէն, Ղարար աղբիւր:

Կալուածքի արօտատեղիներն են ամառուայ համար՝ Նազարգաղ և Սոթ, Չաթինգաղ, Ալաւորա, Սովուղրուլախ, Փիր, Առչի — գատուկ, Գելիկ, Խանրուլաղ, Շամլուղ

բաշի և Մոսկոր կոչուած տեղը, որ պարբերապապատ է և ըստ աւանդութեան քաղաք է եղել:

Ե Կ Ե Մ Ո Ւ Տ .

Վանքն այդ ահագին 21000 դեխիատին ընտիր կալուածքից, որ, ինչպէս տեսանք, ունի ամենագեղեցիկ անտառներ, վարելահողեր և արօտատեղիներ՝ մինչև այժմ չնշին արդիւնք է ստացել: Պատճառները զանազան են. գլխաւորը կենդորոններից հեռու լինելը, ճանապարհների պակասութիւնը և վերջապէս՝ անտէրութիւնը: Սկիզբները անտառը գին չունէր, իսկ բնակութիւն սակաւ էր, ուստի և մշակելու հողերի շահեցումը աննշան: Երբ Մարց գիւղից յետոյ քիչ քիչ շէնացան Լօրուտ, Ծամուտ, Աթան և Ահնիզօր գիւղերը և յուսալի էր տասանորդական մեծ եկամուտ ստանալ, սկսուեց գանձարանի վէճը: Կապալառուները չկարողացան վանքի թոյլտուութեամբ այդտեղ վերաբնակուած գիւղացիներին սիրով պահել, սորա էլ չարամիտ անձանց թերադրութեամբ ըմբոստացան և դադարեցին տուրքեր վճարելուց: Արդիւնք ստացուել է հետևեալ չափով:

1850 թուին Թիֆլիզեցի մի մասվաճառ Գարոյ Տէր Աբրահամեան կապալով վերցրել է այդ կալուածքը տարեկան 250 ռ. վճարով: Ինչ որ ձեռքին պահում է կապալը մինչև 1875 թ. իսկ վերջը կապալադրամը հասցնում է մինչև 400 ռ.: Յայտնուում է գանձարանի կողմից վէճ. Թիֆլիզի Կոնսիստորիայն ցանկալով այդտեսակ կարևոր բոլեում ազգեցիկ ներկայացուցիչներ ունենալ, կապալը տալիս է Ջալալօղլեցի Մկրայէլ Խանաղեանին և Տիգրան Տէր Դաւթեանին 500 ռուբլով: 1883—1885 թ. կապալը անցնում է Թիֆլիզեցի Աբովեան եղբարց ձեռքը 500 ռ. սրանց ժամանակ ըմբոստանում են Լօրուտ գիւղացիք, ստիպում են կապալառուին դուրս գնալ իրենց գիւղից, այրելով նրա փայտաշէն տունը: Կապալառուն չի վճարում վերջի տարուայ կապալադրամը: Իրերի այդ գրութիւնը ստիպում է Թիֆլիզի Կոնսիստորիային կալուածքը այլևս կապալով չտալ, այլ առանձին կառավարի, որի գլխաւոր նպատակը լինի պահպանել վանքի շահերը վէճի ժամանակ և անտառը անխնայ ոչնչացումից ազատել: Պ. Տիգրան Տէր Դաւթեանը հրաւիրուում է այդ պաշտօնին, և արուում է նրան իրաւունք կառավարել կալուածքը, եկամուտներից ծախսել և ժապաւինեալ մատենանով տարէջտարի հաշիւ ներկայացնել. «Եւ ի վախճան տարւոյն զայն մատեան ընդ յուելեալ արդեանցըն մատուցանել ատենիս (Կոնսիստ. Թիֆլ.)», որ ունի վարձատրել զձեզ ըստ չափու յաւելուածոց տարեկան արդեանց»:

Այդ պայմանը շարունակուել է մինչև դատարանական վէճի վերջանալը:

1895 թուին համար պ. Կառավարիչը արդիւնք ցոյց տուեց մեզ հետևեալ չափով.

Մարց գիւղից.

Դրամական արդիւնք

Ծխահարկ մի մի ռուբլի	50—60 ռ.
Վառելիքի փող	14—15 ռ.
Խոզերից՝ արածացնելու փող	70—120 ռ.*
Լօրուտ գիւղից վառելափայտի	50—50 ռ.
Երկու ջրազացից	14—15 ռ.†
Գումարն էր	198—2.0 ռ.

Բնական ընթերց

	Թաղար	փութ
Յորեան	70	630††
Գարի	20	180
Հաճար	12	108
Կորեկ	3	27
Կարտափիլ	—	1
Լոբի	—	2
Ծխախոտ	—	2

* Իւրաքանչիւր խող անտառում արածացնելու համար գիւղացին վճարում էր, մեծ խողին 20-ական կոպ., փոքրին 10-ական կ. եթէ անտառում կողին և աճար քիչ է, ստացուում էր զրա կէտը. ամբողջ տարին արածում էին 400—700 խող:
† Կալուածքում կան եօթը ջրաղաց. վճարում էին միայն երկուսը, հինգը ըմբոստ էին:
†† Իւրաքանչիւր թաղար 9 փութ է, ծախսուում էր 5 ռուբլիով:

Կալիսիզ (իրաքանչիւր կովից և — —
 դովնից երկ երկու ֆունգ) — 7—9
 Ալխարի մի օրուայ կաթից պանիր — 2—3
 Լօրուայի իւղ — 2—2
 Պանիր մի օրուայ ոչխարի կաթից — 3 4
 Ալլեայլ միտերք ըտրը՝ 85—968

Բնական միտերքների գինն հաշուեց մօտաւորապէս 550 ր. ըտրը միասին գուրու էր գալիս 820 ր. իսկ եթէ աւել հաշուելու լինէինք հաղիւ 1000 ր. հասնէր այդ մեծ կալուածքի եկամուտը:

Կալուածքի նկարագրին կցել էինք մի քանի նպատակայարմար և իրադօրծելի միջոցներ, որոնցից էականներն են:

ա) Երկաթուղին արդէն անցնում է կալուածքի մօտով. մեր ամենաընտիր անտառը մնում է առանց շահեցման, մինչդեռ ուրիշ կալուածատէրեր հարիւր հազար ուրբլինքով գուտ պիտի ստանան իրենց անտառներից: Մեր անտառներում կան բազմատեսակ ծառեր շինութեան համար՝ Ծափի, Կաղնի, Լօրի, Աճարի, Բարգի, Թեղի, Թիթի, Լենատերև, Բոխի, Տանձի, Խնձորի, Առնետի, Բազմաթիւ թփեր՝ Մնձենի, Կարգնենի, Ալաժահրի, Մամուլ, Հոնի, Ճապկի, Նիմֆիլի, Զկեռ, Բիթրղկենի (Թանթրվենի), Հաղարճի, Դաժի, Գերեմասրի, Տկոզնի, վայրենի Եսամանի, Կեչի: Հմուտ անտառապահի պիտի ուսումնասիրել տալ այդ ամենը և նրա առաջարկած ծրագրով արդիւնաւոր հանել այդ բազմաթիւ ծառերը:

բ) Կալուածքում կան հանքեր՝ պղինձ և երկաթ ապացուցուած, ուրիշ հանքեր ենթադրական. անհրաժեշտ է հմուտ երկրաբան հրախրել և իմանալ նրանց չափն ու արժէքը:

գ) Կալուածքի վերայ ապրող գիւղացիները որ և է հողատիրական իրաւունք չունեն, անհրաժեշտ է անպայման դարձին լաւակեան և բարեխիղճ անձ ունենալ վանքի և գիւղացոյ իրաւանց սահմանը որոշելիս, և ապագայի համար փաստակար կարգադրութիւններ չանել:

դ) Հողերը վանքի հետ մաս ունեցող Բաշէուկ-Մելիքով աղնուականների հետ բա-

ժանելիս, ոչ մի կերպ չպիտի համաձայնուել, որ նոքա ստանան կալուածքի որևէ մասի մի ամբողջական հատուած, որովհետև կալուածքի յատկութիւնը այնպէս է, որ վանքը ամեն տեղ էլ մաս պիտի ունենայ: Օրինակ Լօրուտը ունի ամենաընտիր վարելահողեր. Եամուտի մօտ է ամենաթանգ շամի անտառը. Ալմանի ամառուայ արօտատեղիք ընտրապէս են: Կաղնուտ անտառի ընդարձակ և օգտաւէտ մասերը ցրուած են: Արփաթալայ, Զաղիաներ, Սարբաշթալայ, Զաթինդուղ և Սոթ կուշուած տեղերում: Այս կտորներից մէկից կամ միւսից զրկուած լինելը կարող է ապագայում վանքի համար փաստակար լինել:

Այս տեղեկագիրը գրուած է 1895 թուի Հոկտեմբեր ամսում և իրիւ պաշտօնական թուղթ ներկայացրած Սինօգին, հարկաւ ոչ այս ձևով: Գանձարանի հետ վեճը վերջանալուց յետոյ, երբ վանքն ու յիշեալ Բաշէուկ—Մելիքով աղնուականները անվիճելի սեղհականատէրեր են 14000 գեւտեալին, ըստ մեծի մասին անտառածածկ, ընտիր հողերի, որից 10500 գեւտալինը վանքինն է, և երբ այդպիսի հարտութիւնն այլևս չի գտնուում անշահապրծելի պայմաններում, այլ երկաթուղու շտրհիւ, ամենայնպէս պայմաններում, այդպիսի մի կալուածք արժանի է ոչ թէ այսպիսի թեթիւ վեր ի վերոյ նկարագրութեան մի քանի օրով արագ կերպով կատարուած, այլ լուրջ և բազմակողմանի ուշադրութեան: Ապաստով և յուսալով որ մի օր կկատարուի այդ գործը, յոյս ունենք ընդհանուր ծանօթութեան համար մեր համառօտ տեղեկագիրն էլ անհետաքրքրական չի նկատուիլ:

Մեսրոպ Վարդապետ

